«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ
Общественная организация “Армянский центр защиты прав человека им. А.Д.Сахарова”
“ The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre„ Non governmental organization

ՀՀ, 0009 ԵՐԵՎԱՆ, Սարմենի 1 1 Sarmen St., 0009 YEREVAN, ARMENIA РА, 0009 ЕРЕВАН, ул. Сармена 1
(37410) 54-29-36, 58-78-64, 56-15-05 Fax: (37410) 561505 e-mail: sakhfd@arminco.com , www.sakharovcentre.org

08 հուլիսի 2011թ. **Ե-1925**

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սարգսյան,

Բավականին կարևոր և անհետաձգելի հարցի հրատապ լուծման կապակցությամբ ես հարկադրված եմ դիմել Ձեզ աջակցություն ստանալու ակնկալիքով:

Հարցի էությունը կայանում է նրանում, որ 2011թ. հուլիսի 6-ի վաղ առավոտյան (ականատեսների վկայությամբ մոտավորապես ժամը 4:30 - 5:00 սահմաններում) հրկիզվել է Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն հասարակական կազմակերպության Շիրակի մասնաճյուղի Գյումրու գրասենյակը, որը գտնվում է ք. Գյումրի, Մեր Մկրտչյան փող. 38ա, բն. 1 հասցեում:

Կարելի է հավաստել, որ հրկիզումն իրականացրել են այն շահագրգռված ուժերը, ում դուր չի գալիս Սախարովի Կենտրոնի Շիրակի մասնաճյուղի գործունեությունը՝ Գյումրի քաղաքում հանրային շահերի պաշտպանության ուղղությամբ:

Գյումրի քաղաքում դա առաջին փորձը չէ, երբ կիրառվում են հասարակայնությանը, մասնավորապես քաղաքացիական հասարակության կառույցներին վախեցնելու նմանատիպ մեթոդներ:

Սույն գրությամբ չեմ ցանկանում Ձեր ուշադրությունը սևեռել Սախարովի Կենտրոնի Շիրակի մասնաճյուղի՝ մարզում և ընդհանրապես Հայաստանի Հանրապետության տարածքում ունեցած նրա հասարակական դերի ու նշանակության վրա: Սակայն հրկիզման կազմակերպիչներն իրենց գավառական մտածելակերպով չեն հասկանում, թե ինչպիսի հասարակական ռեզոնանս կունենա այդ արարքը՝ ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Սա ևս մեկ հարված կարող է լինել Հայաստանի Հանրապետությանը և կարող է ազդել նրա վարկանիշի վրա:

Հարկ է նկատել, որ նույնիսկ 90-ական թվականներին՝ Հայաստանում անօրինության և «բեսպրեդելի» ծաղկման ժամանակաշրջանում, այդպիսի գործողություններ չեն ձեռնարկվել Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի նկատմամբ:

Այսպիսով, դիմում եմ Ձեզ, նպատակ չհետապնդելով վեր հանելու հրկիզման հասարակական-քաղաքական հետևանքները, այլ խնդրանքով՝ ներդնել բոլոր ջանքերը և օգտագործելու ՀՀ օրենսդրությամբ Ձեզ տրված բոլոր լիազորությունները, հայտնաբերելու այս հակահասարակական և անհեռատես արարքի իրականացնողներին ու պատվիրատուներին և պատժել նրանց:

Իմ խնդրանքը հիմնված է այն հանգամանքի վրա, որ քննիչները, ովքեր հետաքննում են տվյալ հանցագործությունը, շատ մակերեսորեն իրականացրել են հանցագործության կատարման վայրի զննությունը և ուշադրություն չեն դարձրել որոշ իրեղեն ապացույցների առկայությունը (օրինակ՝ մետաղալարը, որով ամրացված է եղել հրկիզող սարքը):

Կրկին խնդրում եմ Ձեր անմիջական աջակցությունը վերը նշված հանցագործության բացահայտման գործընթացում:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Տնօրեն